ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ընդհանուր տեղեկություններ ռիսկերի մասին

1. Ֆինանսական շուկայում գործունեության ընթացքում Հաճախորդի համար հնարավոր ռիսկերի վերաբերյալ սույն հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) ներառում է ռիսկերի նկարագրությունը, որոնք կարող են ի հայտ գալ «ՌՈՔ Կապիտալ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջոցով կամ օժանդակությամբ ֆինանսական շուկայում գործունեություն իրականացնելիս: Ստորև նկարագրված ռիսկերը հավասարապես կիրառելի են ինչպես Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում, այնպես էլ օտարերկրյա շուկաներում թողարկված/գրանցված կամ շրջանառվող ֆինասնական գործիքների նկատմամբ:

2. Ֆինանսական շուկայում գործարքները կարող են բերել ինչպես եկամուտներ, այնպես էլ ֆինանսական կորուստներ: Նախորդ փորձն ու փորձառությունը չի երաշխավորում ապագայի ֆինանսական արդյունքներ: Որևէ մեկի մոտ ֆինանսական հաջողությունները չեն երաշխավորում նույնպիսի արդյունքներ ուրիշների համար: Ուստի, անձանց խորհուրդ չի տրվում Ընկերության հետ կնքել Ֆինանսական շուկաներում բրոքերային և պահառուական ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»), եթե նրանք ծանոթ չեն կամ լիարժեք չեն գիտակցում ֆինանսական շուկայում գործարքների իրականացմանը բնորոշ ներքոնշյալ, ինչպես նաև այլ հնարավոր ռիսկերը:

3. Սույն Հայտարարագրի իմաստով «ռիսկեր» հասկացության տակ հասկացվում է որոշակի դեպքերի, իրավիճակների կամ գործընթացների ի հայտ գալու հավանականություն, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել Ընկերության հաճախորդի համար անբարենպաստ հետևանքների: Հաճախորդը հատկապես պետք է գնահատի ռիսկերը պրոֆեսիոնալ հաճախորդների համար նախատեսված ֆինանսական գործիքներով գործարքներ կատարելիս:

4. Հայտարարագրի 3-րդ կետում նշված դեպքերի, իրավիճակների և գործընթացների բազմազանության պատճառով, սույն Հայտարարագրում թվարկված ռիսկերն ամբողջական չեն և չեն բացահայտում ֆինանսական շուկայում գործունեության հետ կապված ռիսկերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:

5. Ռիսկերը հատկապես մեծ են ոչ բավարար ծածկույթով գործարքների իրականացման պարագայում: Ոչ բավարար ծածկույթով գործարքների դեպքում գների, տոկոսադրույքների և փոխարժեքների անգամ փոքր տատանումները

կարող են հանգեցնել էական կորուստների, ինչը պայմանավորված է միջոցների փոխառման (ֆինանսական) լծակի էֆեկտով:

Ռիսկերի կոնկրետ տեսակները և դրանց ընդհանրական նկարագիրը

6. Ֆինանսական շուկաներում գործարքների իրականացումը կապված է հետևյալ ռիսկերի հետ.

- **Վարկային ռիսկ.** Արժեթղթի թողարկողի կամ կնքված որևէ գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկն է:

- **Տոկոսային ռիսկ.** ֆինանսական շուկայում տոկոսադրույքների փոփոխության ռիսկն է, որը կարող է հանգեցնել ֆինանսական ակտիվների արժեքի անկման:

- **Գնային ռիսկ.** Ֆինանսական շուկայում գների փոփոխության ռիսկն է, որը կարող է հանգեցնել ֆինանսական ակտիվների արժեքի անկման:

- **Արտարժութային ռիսկ.** ֆինանսական շուկայում արժութային փոխարժեքների փոփոխության ռիսկն է, որը կարող է դրսևորվել որևէ արժույթով արտահայտված ակտիվների կամ պարտավորությունների արժեքի անբարենպաստ փոփոխությամբ:

- **Իրացվելիության ռիսկ.** Ֆինանսական ակտիվները կարճ ժամկետում և արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է:

- **Գնաճի (ինֆլյացիոն) ռիսկ.** գնաճի (ինֆլյացիայի) պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է:

- **Գործառնական ռիսկ**. գործառնությունների կատարման ընթացքում հնարավոր սխալների կամ խափանումների ռիսկն է, որն իր մեջ ներառում է տեխնիկական (սարքավորումների, էլեկտրասնուցման, ինտերնետ կապի կամ այլ տեխնիկական բնույթի խափանումներ), ծրագրային (գործառնությունների կատարման համար օգտագործվող ծրագրային ապահովման աշխատանքի խափանումներ, կամ սխալներ) և մարդկային (գործառնությունների կատարման համար պատասխանատու անձանց սխալներ կամ խարդախություն) գործոններով պայմանավորված ռիսկերը:

- **Իրավական ռիսկ.** նոր օրենսդրական ակտերի ընդունման կամ էական օրենսդրական ակտերի (այդ թվում նաև հարկային) փոփոխության արդյունքում ներդրումային միջավայրի վատացման ռիսկն է: Իրավական ռիսկը ներառում է

նաև ազգային կամ միջազգային տնտեսական պատժամիջոցների կիրառման բացասական հետևանքները:

- **Քրեական ռիսկ.** հակաօրինական գործողությունների հետ կապված ռիսկն է. օրինակ՝ փաստաթղթային տեսքով թողարկված արժեթղթերի կեղծում, խարդախություն, անթույլատրելի մուտք համակարգչային համակարգեր և այլն:

- **Քաղաքական ռիսկ.** Ներդրումների արժեքի վրա քաղաքական ցնցումների անբարենպաստ ազդեցության ռիսկն է:

- **Գլոբալ տնտեսական ռիսկ.** Ներդրումների վրա համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական ճգնաժամերի և տնտեսական ցնցումների անբարենպաստ ազդեցության ռիսկն է:

Էլեկտրոնային հավելվածի միջոցով ծառայությունների մատուցմանը հատուկ ռիսկերը

7. Ստորև նկարագրված ռիսկերը հավասարապես վերաբերում են ինչպես Ընկերության էլեկտրոնային հավելվածին, այնպես էլ ցանկացած այլ ծրագրային ապահովմանը, որը կարող է օգտագործվել հաճախորդներին ծառայությունների մատուցման շրջանակներում:

8. Հաճախորդը պետք է հաշվի առնի, որ ծրագրային ապահովման հետ աշխատելիս առաջանում են դրա անկայուն աշխատանքի ռիսկեր՝ պայմանավորված ծրագրային ապահովման խափանումներով, ինտերնետ կապի տատանումներով, սարքավորումների անսարքություններով, կենսաչափական նույնականացման (օրինակ՝ Face ID, Touch ID կամ այլ համանման միջոցների) ոչ պատշաճ աշխատանքով և այլ տեխնիկական խնդիրներով:

9. Ծրագրային ապահովման հետ աշխատելիս՝ առկա են նաև հայտերի ներկայացման ժամանակ սխալի առկայության ռիսկեր, ներառյալ ծրագրային ապահովման մեջ ժամային գոտու կամ տեղական ժամանակի սխալ ցուցադրման արդյունքում տվյալների փոխանցման ուշացման ռիսկը և այլ ռիսկեր: Նշված ռիսկերի իրականացման արդյունքում հաճախորդը կարող է զրկվել ծրագրային ապահովման միջոցով որոշակի ժամանակահատվածում հայտ ներկայացնելու հնարավորությունից, հայտը կարող է ուշացումով ներկայացվել կամ չներկայացվել բորսայի առևտրային հարթակ, հայտը կարող է չկատարվել հաճախորդի ցուցումներին համապատասխան կամ չկատարվել առհասարակ: Հաճախորդը պետք է հաշվի առնի, որ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված ռիսկերի համար, եթե դրանք չեն առաջացել Ընկերության մեղքով:

10. Ծրագրային ապահովման հետ աշխատելիս, այդ թվում՝ ծրագրային ապահովման միջոցով պատվերներ ներկայացնելիս, առկա է նաև երրորդ անձանց կողմից ծրագրային ապահովում չարտոնված մուտքի հնարավորություն: Դա կարող է դրսևորվել էլեկտրոնային փոստի, հեռախոսահամարի, հաղորդագրությունների, ծանուցումների կամ նույնականացման այլ միջոցների նկատմամբ չարտոնված հասանելիության կամ այլ ձևերով: Հաճախորդը, համաձայնելով ներկայացնել հայտեր ծրագրային ապահովման միջոցով, պետք է գիտակցի, որ ինտերնետ կապն անվտանգ ուղի չէ և պետք է հաշվի առնի, որ կրում է գաղտնիության հնարավոր խախտման հետ կապված բոլոր ռիսկերը, որոնք առաջանում են այդպիսի կապուղու օգտագործման արդյունքում:

11. Այն դեպքում, երբ Ընկերության կողմից տրամադրվող ծրագրային ապահովման և/կամ հաճախորդի կողմից ինքնուրույն օգտագործվող ծրագրային ապահովման ֆունկցիոնալ հնարավորությունները հաճախորդին թույլ են տալիս իրականացնել հայտերի ներկայացումը ավտոմատ ռեժիմով, Հաճախորդը պետք է հաշվի առնի, որ դրա արդյունքում նվազում է կոնկրետ գործարքների նկատմամբ Հաճախորդի վերահսկողությունը և իր կողմից սխալ ներդրումային ռազմավարություն ընտրելիս առաջանում է մեծ թվով ոչ շահավետ գործարքների (վնասով գործարքների) կատարման ռիսկ:

12. Էլեկտրոնային հավելվածի միջոցով գործարքներ կատարելիս առկա են նաև առևտրի կազմակերպչի առևտրային տերմինալում խափանումների ռիսկերը: Նշված ռիսկի արդյունքում հաճախորդի կողմից շուկայական պատվերի հիման վրա գործարք կատարելու դեպքում առկա է գործարքը պատվերը ներկայացնելու պահին նախորդող գնից էականորեն տարբերվող գնով կատարվելու ռիսկ:

Ոչ բավարար ծածկույթով գործարքների հետ կապված լրացուցիչ ռիսկերը

13. Ոչ բավարար ծածկույթով գործարքն այնպիսի գործարք է, որի առնձնահատկությունը գործարքի կատարման համար անհրաժեշտ գումարից զգալիորեն փոքր գումարի առկայության պայմաններում գործարքը կնքելու հնարավորությունն է (Օրինակ՝ մարժայով գնումը, որի դեպքում հաճախորդը փոխառու դրամական միջոցների օգտագործմամբ գնում է արժեթղթեր կամ կարճ վաճառքը, որի դեպքում Հաճախորդը վաճառում է փոխառությամբ վերցված արժեթղթեր):

14. Ոչ բավարար ծածկույթով գործարքի դեպքում տոկոսային, գնային և արժութային ռիսկերի ազդեցությունը Հաճախորդի վրա էապես մեծանում է, քանի որ դրանց արդյունքում տատանվում է գործարքի ամբողջ արժեքը, ինչը կարող է բազմակի

անգամ գերազանցել գործարքում օգտագործվող Հաճախորդի սեփական միջոցների արժեքին:

15. Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելիս հաճախորդը պետք է հաշվի առնի նաև, որ իր սեփական միջոցներն օգտագործվում են որպես գործարքի ապահովության միջոց և դրանց նկատմամբ կարող են կիրառվել տնօրինման սահմանափակումներ՝ ընդհուպ մինչև դրանցով որևէ գործարքի կատարման լիակատար արգելք:

16. Ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելիս Հաճախորդը պետք է հաշվի առնի նաև, որ երբ գործարքի գծով արձանագրվում են վնասներ (օրինակ՝ մարժայով գնումից հետո գործարքի առարկա արժեթղթերի գները նվազում են կամ կարճ վաճառքից հետո՝ աճում) Ընկերությունը կարող է ձեռնարկել այնպիսի լրացուցիչ ապահովության միջոցառումներ, ինչպիսիք են հաճախորդից լրացուցիչ ապահովության միջոցներ (դրամական միջոցների կամ արժեթղթերի տեսքով) պահանջելը կամ տվյալ պահին շուկայում առկա գնով հաճախորդի դիրքի հարկադիր փակումը:

Արհեստական բանականության (ԱԲ) գործիքների կիրառման հետ կապված ռիսկերը

17. Թեև Ընկերության էլեկտրոնային հավելվածի միջոցով առաջարկվող ԱԲ գործիքների կիրառումն ունի բազմաթիվ առավելություններ, մինչ ԱԲ գործիքների օգտագործումը հաճախորդը պետք է գնահատի ԱԲ կիրառման հետ կապված բոլոր ռիսկերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով ստորև նշվածներով.

- **Կողմնակալության ռիսկ**. ԱԲ ալգորիթմները սովորում են տվյալներից, և եթե տվյալները կողմնակալ են, ալգորիթմը ևս կարող է հանդես գալ նույն կողմնակալությամբ՝ հանգեցնելով օգտագործողների համար անարդար արդյունքների:

- **Արդիականության ռիսկ**. ԱԲ ալգորիթմները հիմնվում են տվյալների վրա, և եթե տվյալները արդիական չեն, ալգորիթմի բերած արդյունքը նույնպես կլինի ոչ արդիական՝ հանգեցնելով օգտագործողների համար սխալ արդյունքների:

- **Բարդություն ռիսկ**. ԱԲ ալգորիթմները կարող են լինել բարդ և դժվար ընկալելի նույնիսկ մասնագետների համար, ինչը դժվարեցնում է հնարավոր ռիսկերի բացահայտումն ու վերահսկումը:

- **Սխալների ռիսկ.** ԱԲ ալգորիթմները կատարյալ չեն և կարող են սխալներ թույլ տալ, ինչը կարող է հանգեցնել օգտագործողների ֆինանսական կորուստների:

- **Երրորդ կողմերից կախվածության ռիսկ**. ԱԲ գործիքների աշխատանքն ապահովելու համար Ընկերությունը կախված է երրորդ կողմերից, օրինակ՝ լրատվական հրապարակումներից, գործընկերներից և շուկայական տվյալներ տրամադրողներից: Չկա երաշխիք, որ երրորդ կողմերը միշտ կաշխատեն ճշգրիտ և ժամանակին, ինչի հետևանքով հնարավոր է ստանալ սխալ տեղեկատվություն:

- **Մոդելային ռիսկ**. ԱԲ գործիքները ապահովող մոդելները կարող են թարմացվել կամ փոփոխվել առանց նախազգուշացման, ինչը կարող է ազդել գործիքի աշխատանքի և արդյունքների ճշգրտության վրա: Խորհուրդ է տրվում ներդրումային որոշումներ կայացնելիս չհիմնվել միայն ԱԲ գործիքների արդյունքների վրա:

- **Լեզվական, համատեքստային կամ մեկնաբանական շեղումների ռիսկ**. ԱԲ գործիքների կողմից գեներացված կամ մշակված տեղեկատվությունը կարող է պարունակել ոչ հստակ իմաստ կամ համատեքստից կտրված ձևակերպումներ, ինչը կարող է հանգեցնել տվյալների տարբեր մեկնաբանությունների կամ սխալ ընկալման: Այսպիսի շեղումները կարող են առաջանալ ինչպես լեզվական առանձնահատկությունների, այնպես էլ մուտքային տվյալների թերի կամ ոչ ամբողջական լինելու արդյունքում՝ հանգեցնելով օգտագործողների կողմից ոչ ճշգրիտ եզրակացությունների կամ որոշումների ընդունման: